ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ***ԵԴ2/14563/02/23***

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահությամբ դատավոր ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆԻ

2023 թվականի օգոստոսի 23-ին քաղաք Երևան

ծանոթանալով վարույթում գտնվող «ԴԷԿՍ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Գևորգ Դավթյանի հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 16.06.2023 թվականի ծանուցմամբ պայմանագիրը միակողմանի (ամբողջությամբ) լուծելու գործողությունները ոչ իրավաչափ և դրան փոխկապակցված «ԴԷԿՍ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին

ՊԱՐԶԵՑ

«ԴԷԿՍ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Գևորգ Դավթյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 16.06.2023 թվականի ծանուցմամբ պայմանագիրը միակողմանի (ամբողջությամբ) լուծելու գործողությունները ոչ իրավաչափ և դրան փոխկապակցված «ԴԷԿՍ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին:

Հայցադիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Դատարան) գրասենյակ է մուտքագրվել 14.07.2023 թվականին, իսկ դատավոր Ա. Շիլաջյանի աշխատակազմին է հանձնվել 09.08.2023 թվականին:

Դատարանի 14.08.2023 թվականի որոշմամբ «ԴԷԿՍ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Գևորգ Դավթյանի հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 16.06.2023 թվականի ծանուցմամբ պայմանագիրը

միակողմանի (ամբողջությամբ) լուծելու գործողությունները ոչ իրավաչափ և դրան փոխկապակցված «ԴԷԿՍ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին հայցադիմումն ընդունվել է վարույթ և ՀՀ քաղաքաշինության կոմիտեից պահանջվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի կողմից 16.08.2023 թվականին փոստային ծառայության միջոցով ներկայացվել է հայցադիմումի պատասխան, որը մուտքագրվել է Դատարան 18.08.2023 թվականին (հիմք՝ Դատարանի էրեբունու նստավայրի գրասենյակի դրոշմակնիք Մ-31376/23):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու մասին դատարանը կայացնում է որոշում հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատական ատյանում վարույթը եզրափակող դատական ակտերը (այսուհետ՝ եզրափակիչ դատական ակտ), իսկ օրենքով կամ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերը ենթակա են պարտադիր հրապարակման դատական իշխանության պաշտոնական կայքում:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ սույն գործը պետք է քննել և դրա վերաբերյալ վճիռը կայացնել գրավոր ընթացակարգով, քանի որ գործին մասնակցող անձինք գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդություն չեն ներկայացրել, ինչպես նաև առկա չէ անհրաժեշտություն գործը քննել դատական նիստում, հետևաբար Դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործը պետք է քննել գրավոր ընթացակարգով, իսկ Դատարանի՝ եզրափակիչ դատական ակտը հրապարակել դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով 26.09.2023 թվականին:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ, 200-րդ և 361-րդ հոդվածներով և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներով՝

ՈՐՈՇԵՑ

1. «ԴԷԿՍ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Գևորգ Դավթյանի հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 16.06.2023 թվականի ծանուցմամբ պայմանագիրը միակողմանի (ամբողջությամբ) լուծելու գործողությունները ոչ իրավաչափ և դրան փոխկապակցված «ԴԷԿՍ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին մասին քաղաքացիական գործը քննել գրավոր ընթացակարգով:

2. Թիվ ԵԴ2/14563/02/23 քաղաքացիական գործով դատարանի՝ եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով **2023 թվականին սեպտեմբերի 26-ին**:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՇԻԼԱՋՅԱՆ**